



ԽՈՐԱՅՐԵՔ ԶԵՐ ԳՀԻՏԵԼԻՔՆԵՐԸ

ՀՀ-ում, ԵՄ-ում և ԱՄՆ-ում ԳՁՕ արտադրությունն ու ներկրումը կարգավորող օրենսդրական մոտեցումների համեմատական վերլուծություն

Գենետիկորեն ձևափոխված օրգանիզմների (ԳՁՕ) արտադրության և ներկրման կարգավորումը փարբեր երկրներում փարբեր է՝ պայմանավորված տնտեսական, սոցիալական և առողջապահական քաղաքականություններով:

Եվրոմիության երկրներում ԳՁՕ կարգավորումն իրականացվում է բավական խիստ կանոնակարգերով: Այսպես գործում է «նախազգուշության սկզբունքը», որը պահանջում է ապացուցել ԳՁՕ-ի անվտանգությունը նախքան շուկա մուտք գործելը: Յուրաքանչյուր ԳՁՕ անցնում է մանրակրկիտ սրուգման ու անվտանգության գնահատման փուլ Եվրոպական պարենային անվտանգության գործակալության (EFSA) կողմից: Պարտադիր է նաև ԳՁՕ-ների պիտակավորումը, եթե դրանց պարունակությունը գերազանցում է օրգանիզմի 0.9%-ը

ԱՄՆ-ի մոտեցումն առավել ազատական է: Այսպես ԳՁՕ-ների կարգավորումն իրականացվում է մի քանի դաշնային գերատեսչությունների՝ FDA-ի (Մսնդի և դեղորայքի վարչություն), USDA-ի (Գյուղատնտեսության դեպարտամենտ) և EPA-ի (Շրջակա միջավայրի պաշտպանության գործակալություն) միջոցով: ԱՄՆ-ի մոտեցումը հիմնված է «էական համարժեքության» սկզբունքի վրա, ըստ որի՝ եթե ԳՁՕ մթերքը համարժեք է ավանդական փարբերակին, այն համարվում է անվտանգ:

ԱՄՆ-ում չկա պարտադիր պիտակավորման պահանջ ԳՁՕ-ների համար դաշնային մակարդակում, թեև որոշ նահանգներ ունեն իրենց սեփական պիտակավորման պահանջները: 2022 թվականից ուժի մեջ է մտել «Բիրինժեներային սննդի բացահայտման սրանդարտը», որը պահանջում է սնունդն օգտագործողներին որոշակի տեղեկատվության տրամադրում:

Հայաստանում ԳՁՕ-ների կարգավորումն իրականացվում է «Գենետիկորեն ձևափոխված օրգանիզմների մասին» ՀՀ օրենքով, որն ընդունվել է 2014 թվականին: Օրենքը սահմանում է ԳՁՕ-ների օգտագործման, փոխադրման, պահպանման և իրացման հիմնական պահանջները: Բացի այդ, ոլորտը կարգավորվում է նաև հետևյալ օրենսդրական ակտերով.

- «Մանրամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենք
- «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենք
- Կառավարության համապատասխան որոշումներ:

Հայաստանի օրենսդրությունը մեծապես համահունչ է ԵՄ կարգավորումներին, ինչը պայմանավորված է ԵՄ-ի հետ համագործակցության շրջանակներով: Պարտադիր է ԳՁՕ պարունակող մթերքի պիտակավորումը, եթե դրանց պարունակությունը գերազանցում է 0.9%-ը: ԳՁՕ մթերքների ներկումը պահանջում է պետական մակարդակով թույլվություն: Կան նաև ԳՁՕ-ների արտադրության որոշակի սահմանափակումներ:

Այսպիսով երեք տարածաշրջանների մոտեցումներում կան թե նմանություններ, թե տարբերություններ:

Նմանություններ.

- Բոլոր երեք իրավական համակարգերում առկա է ԳՁՕ-ների անվտանգության գնահատման պահանջ:
- Գործում են հատուկ վերահսկող մարմիններ:
- Առկա են խախտումների համար մարդկանց պատասխանատվության կանչելու միջոցներ:

Տարբերություններ.

- Մոտեցման սկզբունքներում
- ԱՄՆ՝ էական համարժեքության սկզբունք
- ԵՄ՝ նախազգուշության սկզբունք
- ՀՀ՝ նախազգուշության սկզբունք:
- Պիտակավորման պահանջներում
- ԱՄՆ՝ կամավոր պիտակավորում դաշնային մակարդակում
- ԵՄ՝ պարտադիր պիտակավորում (>0.9%)
- ՀՀ՝ պարտադիր պիտակավորում (>0.9%):
- Գնահատման գործընթացում

- ԱՄՆ՝ համեմատաբար պարզեցված գնահատում
- ԵՄ՝ խիստ և մանրակրկիտ գնահատում
- ՀՀ՝ նվազ խիստ, բայց, առավել մոտ ԵՄ մոդելին:
- Շուկայի մուրքի պայմաններում
- ԱՄՆ՝ համեմատաբար ազատական մոդեցում
- ԵՄ՝ խիստ սահմանափակումներ
- ՀՀ՝ խիստ սահմանափակումներ:

Այսպիսով, ԱՄՆ-ի, ԵՄ-ի և ՀՀ մոդեցումները էականորեն տարբերվում են: ԵՄ-ը որդեգրել է առավել խիստ և պահպանողական մոդեցում, ԱՄՆ-ը՝ ավելի ազատական, իսկ Հայաստանը գրավում է միջանկյալ դիրք, առավել մոտ լինելով եվրոպական մոդելին: